

զարնել տուողները կամաւոր տուրք մը կուտան եկեղեցւոյն : Այս տուրքը ատենով Առաջնորդական արդեանց հաշուին կանցնէր . իսկ այժմու Գ. Առաջնորդը սահմանեց , եւ Առաջնորդական Ատենիս մէջ արձանագրել տուաւ , որ այն տուրքը այսուհետեւ երթայ Նախիջեւանի Հոգեւոր Գպրոցին իբրեւ նպաստ : — Նմանապէս իտապանատեղեաց հաւաքեալ արդիւնքին կէսը գրեն երէցփոխանք իրենց եկեղեցւոյն արդիւնք , եւ միւս կէսը նոյն Հոգեւոր Գպրոցին տան :

*Յուլիսի 27.* — Եկեղեցական եւ քաղաքական իշխանութեանց որոշմամբը՝ Գէորգ Աֆթանտիւլեանցը արձակուեցաւ հարկատուութեան վիճակէն , եւ դասեցաւ իկարգս եկեղեցականաց նոր Նախիջեւանի եւ գիւղօրէիցն :

*Օգոստոսի 10.* — Խաչատուր դպիրն Յովհաննէսեան Խումաշեանց՝ որ ձեռնադրեալ է քահանայ իվերայ սուրբ Համբարձման եկեղեցւոյ Չալծըրի՝ իՍ. Էջմիածին , Առաջնորդական Ատենիս հրամանաւր յանձնուեցաւ Նախիջեւանի քա-

հանայից մէկուն յառժամանակեայ կրթութիւն եւ իվարժութիւն :

*Օգոստոսի 17.* — Աւագ սարկաւազն Ս. Էջմիածնի Խաչատուր Բաբայեան յուղարկուեցաւ իսպասաւորութիւն եկեղեցւոյն Փեթրպուրկի :

*Հոկտեմբերի 2.* — Ըստ առաջարկութեան մեծարոյ երէցփոխանի սուրբ Պօղոս եկեղեցւոյն Գրիգորուպօլսոյ՝ Պ. Կարապետի Տրդատեանց , եւ ըստ վկայութեան Հոգեւորական Կառավարութեան քաղաքին , հրաման տրուեցաւ երէցփոխանին որ նորոգել տայ այն եկեղեցին՝ գործածելով այն ծախքին համար մինչեւ 300 ռ. արծ. :

*Հոկտեմբերի 23.* — Ըստ առաջարկութեան Գ. Առաջնորդի Վիճակիս , եւ ըստ հրամանի Սիւնհոդոսին սրբոյ Էջմիածնի , յուղարկուեցան Նախիջեւանէն յԱստրախան իձեռնադրութիւն քահանայութեան՝ չորս տիրացուք , այսինքն Իգնատիոս սարկաւազ Աստուածատրեան , Ալեքսան դպիր Պարտախճեան , Կարապետ դպիր Զարիֆեան , եւ Ներսէս դպիր Պարտախճեան :

ՀԱՐԿԱԻՈՐ ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

Ա Ռ Ծ Ն Ո Ղ Ս Թ Ո Շ Ա Կ Ա Ի Ո Ր Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ա Յ

ԽԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

Ըստ կանոնի Ուսումնարանիս՝ աշակերտաց թոշակները վեց ամսէ վեց ամիս կվճարուին . բայց որովհետեւ շատ ծնողք իրենց որդւոց թոշակը փոխանակ իւրաքանչիւր ժամանակին վճարելու՝ կուշացընեն այլ եւ այլ պատճառներով մինչեւ երկու իրեք ամիս եւ աւելի , անոր համար Ուսումնարանիս Խորհրդարանը կինդրէ իծնողաց այնպէս կարգադրել իրենց վճարքը որ վեցամսեայ միջոցին ետքի ամսոյն վերջերը՝ թոշակը Ուսումնարանիս Խորհրդարանին ձեռքը հասնի անպատճառ :



\*